

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԳԻ «ՀԱՅՈՑ ԴԱՆԹԵԱԿԱՆԸ»
ՊՈԵՄԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ս. Վ.

Հովհաննես Շիրագի գեղարվեստական ստեղծագործությունները վաղուց են գրավել գրական աշխարհի, լեզվի և մշակույթի բնագավառի մարդկանց, նույնիսկ փիլիսոփաների և բնագետների ուշադրությունը: Նա մեր ժողովրդի կողմից լայն ճանաչման և սիրո արժանացած գրողներից է: Մեծ բանաստեղծի երկերը գնահատել են թե՛ հայ և թե՛ օտար ուսումնասիրողները՝ գրողներ, գրականագետներ, գրական քննադատներ, լեզվաբաններ և ուրիշներ: Նրա գրական ժառանգությանը մեծ ուշադրություն է դարձվում նաև վերջին ժամանակներս¹:

Բանաստեղծի չափածոյի լեզուն ուսումնասիրվել է տասնամյակներ շարունակ, ընդ որում ոչ միայն գրականագետների, այլև հատկապես լեզվաբանների աշխատություններում: Նրա բանաստեղծությունների, պոեմների լեզվին և ոճին ուղղակիորեն կամ այլ աշխատանքի բերումով նվիրվել են գիտական հոդվածներ, ատենախոսություններ և այլն²: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը 1950-ական թթ. ձեռնամուխ է լինում ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի քարտարան ունենալու գործին, որը հիմք դարձավ հետագայում կազմելու նոր, ավելի ծավալուն բացատրական բառարան, քան Մտ. Մալխասյանցի քառահատոր բառարանն էր (վերջինս լույս է տեսել 1940-ական թթ. կեսերին)³: Այդ քարտարանում իրենց տեղն են ունեցել Հովհ. Շիրագի երկերը, որոնց բառապաշարը գրեթե ամբողջովին ներմուծվել է «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»⁴: Վերջինիս հրատարակությունը ձգվել է շուրջ մեկուկես տասնամյակ: Այդ ընթացքում լույս է տեսնում Է. Աղայանի բացատրական բառարանը, որը նախորդներից ավելի բառահոդվածներ է

¹ Տե՛ս, օրինակ, Այվազյան Հ., Շիրագի «Հայոց դանթեականը» պոեմի արդիական շունչը, Ե., 2009, N 1, էջ 137-142: Մուրադյան Ս., Մեծ եղեռնի արժարժումները Հովհաննես Շիրագի ստեղծագործություններում, Էջմիածին, 2009, Դ(ապրիլ), էջ 68-86: Գաբրիելյան Վ., «Հայոց դանթեականը» քերթվածի գեղարվեստական համակարգի շուրջ, Էջմիածին, 2009, Դ(ապրիլ), էջ 87-97:

² Տե՛ս Ալեքսանյան Վ., Հովհաննես Շիրագի ստեղծագործությունների լեզուն և ոճը (թեկնածուական ատենախոսություն, ձեռագիր), Ե., 1959: Մինասյան Ս., Հովհաննես Շիրագի պոեմների լեզուն և ոճը (թեկնածուական ատենախոսություն, ձեռագիր), Ե., 1987: Մելքոնյան Ս., Հովհաննես Շիրագ (գեղարվեստական վարպետության հարցեր), Ե., 1993: Մարության Ա., Նորաբանությունները Հ. Շիրագի «Հայոց դանթեականը» պոեմում, Հայոց լեզու և գրականություն, N 5-6, 2001, էջ 23-31: Մինասյան Ս., Հատուկ անուններից կերտված բայեր, Ե., 2004 և այլն:

³ Տե՛ս Հայերեն բացատրական բառարան, կազմեց Մտ. Մալխասեանց, հհ. I-IV, Ե., 1944-1945 (այսուհետև՝ ՄԲԲ):

⁴ Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1969-1980 (այսուհետև՝ ԺՀԼԲԲ):

ներառում: Ուստի բնական է, որ ինչպես ուրիշ շատ գրողների, այնպես էլ Շիրազի երկերի բառապաշարի նորաբանությունները դրանում համեմատաբար ավելի մեծ տեղ պիտի ունենային⁵:

Ինչպես գիտենք, ժամանակակից հայերենի բառապաշարի նորաբանությունների քննությունը սովորաբար կատարվում է հիշյալ ծավալուն բացատրական բառարանների տվյալների համեմատությամբ: Որոշակի պայմանականությամբ նորաբանություն է այն բառը կամ բառային միավորը, որը կամ գոյություն չունի հիշյալ բառարաններում, կամ էլ եթե կա, ապա անհրաժեշտ է պարզել, թե հեղինակային ինչ պատկանելություն ունի, այսինքն՝ երբ է երևան եկել տվյալ հեղինակի այն երկը, որում տեղ է գտել տվյալ բառը և այլն: Շիրազի բառապաշարի նորաբանությունները նույնպես բնորոշում ենք՝ ելնելով այդ նույն սկզբունքից: Գրեթե յուրաքանչյուր բառ, որ ենթադրվում է, թե կարող է նորակազմություն լինել, համեմատել ենք հիշյալ բառարանների տվյալների հետ:

Եվ ըստ այդմ, նկատի ունենալով նշված բառարաններում միաժամանակ կամ առանձին վերցված տվյալ բառի գոյություն ունենալու կամ գոյություն չունենալու, գոյություն ունենալու դեպքում բնագրային վկայությամբ ամրագրված լինելու կամ ամրագրված չլինելու հանգամանքները, առանձնացնում ենք հետևյալ խմբերը. ա) բառեր, որոնք չկան հիշյալ բառարաններում, բ) բառեր, որոնք կան միայն ԺՀԼԲԲ-ում և ԷԱԲ-ում, սակայն առանց բնագրային վկայության, գ) բառեր, որոնք կան ԺՀԼԲԲ-ում և ԷԱԲ-ում, սակայն միայն առաջինն ունի բնագրային վկայություն, դ) բառեր, որոնք կան ԺՀԼԲԲ-ում և ԷԱԲ-ում, և երկուսն էլ ունեն բնագրային վկայություն, ե) բառեր, որոնք կան միայն ԺՀԼԲԲ-ում, ընդ որում բնագրային վկայությամբ կամ առանց դրա, զ) բառեր, որոնք կան միայն ԷԱԲ-ում, ընդ որում բնագրային վկայությամբ կամ առանց դրա, է) բառեր, որոնք կան ՄԲԲ-ում, իսկ ԺՀԼԲԲ-ում և ԷԱԲ-ում դրանք նկատելի են ոչ միանման, այսինքն՝ մի դեպքում առաջինն ունի, երկրորդը չունի, իսկ մյուս դեպքում՝ երկրորդում կա, առաջինում՝ ոչ:

Հիշյալ խմբավորումից դուրս են այնպիսի բառեր, որոնք գործածված են իմաստային որոշակի տարբերությամբ, այսինքն՝ ունեն բովանդակային տարբերություն, գեղարվեստական-ռճական նրբերանգներ և այլն: Եվ դրանք պայմանավորված են Հովհ. Շիրազի բանաստեղծական ինքնատիպ մտածողությամբ, բխում են երկի համատեքստից, ուստի իմաստային նորաբանություններ են*:

Գեղարվեստական երկերի մեջ իր ուրույն, նույնիսկ բացառիկ տեղն ունի «Հայոց դանթեականը» պոեմը, որը, ինչպես ժամանակին նշել է գրականագետ Ս. Աղաբաբյանը, ունեցել է երկար ու ձիգ ստեղծագործական պատմություն, և տևել է

⁵ Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976 (այսուհետև՝ ԷԱԲ):

* Այս կարգի բառերի քննությանն անդրադառնալու ենք մեկ այլ աշխատանքում:

մի քանի տասնամյակ⁶։ Երեք-չորս տասնամյակ առաջ տպագրվել են այդ երկից առանձին մասեր, իսկ ամբողջական տպագրությունը եղել է շուրջ երկու տասնամյակ առաջ, այն է՝ 1990-ական թթ. սկզբին⁷։

Ստորև անդրադառնում ենք վերը նշված խմբերից երկրորդում ներառված բառերին։ Դրանք այն բառերն են, որոնք չկան ՄԲԲ-ում, սակայն կան միայն ԺՀԼԲԲ-ում և ԷԱԲ-ում։ Ընդ որում, վերջիններքս, իրենց հերթին, չունեն բնագրային որևէ վկայություն։ Նկատենք, որ եթե ԷԱԲ-ում, ինչպես գիտենք, շատ հազվագյուտ դեպքերում են բերվում բնագրային օրինակներ, ապա ԺՀԼԲԲ-ի դեպքում, ընդհակառակը, սովորաբար կան բնագրային վկայություններ։ Իսկ սա նշանակում է, որ ժամանակակից հայոց լեզվի բառարաններում, ինչ-որ հանգամանքներով պայմանավորված, տեղ են գտել նաև այնպիսի բառային միավորներ, որոնք բավական գործածական են, թեև բառարաններում դրանց համար չկան բնագրային օրինակներ՝ որպես հիմնավորում գրական լեզվում տվյալ բառի ունեցած գործածության։

Հովհ. Շիրազի սույն պոեմում գործածվել են շուրջ երեքուկես տասնյակ բառեր, որոնք առանց բնագրային որևէ վկայության բերվում են նաև հիշյալ բառարաններում։ Ուստի կարելի է կարծել, որ միանգամայն տեղին է անդրադառնալ այդ կարգի բառերին։ Դրանք այստեղ հիմնավորում ենք «Հայոց դանթեականը» պոեմից քաղված օրինակներով։ Այնուհետև նման բառերին անդրադառնում ենք ոչ թե այն նկատառումով, որ դրանք անառարկելիորեն Հովհ. Շիրազի կերտած բառերն են, այսինքն՝ հեղինակային նորակազմություններ են, այլ որովհետև գործածված են հայ նոր գրականության երևելի դեմքերից մեկի՝ մեծ բանաստեղծի գեղարվեստական ստեղծագործություններից վերջին ժամանակներս համընդհանուր ճանաչման հասած «Հայոց դանթեականը» պոեմի էջերում։

Ըստ այսմ ասես լրացվում է այն բացը, որը վերաբերում է հիշյալ բառարանների բացատրական մասը գրական որոշակի հուշարձանի բնագրային օրինակներով հիմնավորելուն։ Հետագա ուսումնասիրությունները, բնականաբար, կարող են այս հարցում ճշգրտում մտցնել՝ ելնելով գրական այլ հուշարձաններում այս կամ այն բառի հնարավոր կիրառությունից, եթե ժամանակի առումով նախորդած լինի հիշյալ պոեմին, որը հատվածաբար լույս է տեսել 1960-ական թթ. կեսերից, 1990-ական թթ. սկզբին՝ ամբողջությամբ։

Ստորև այբբենական դասավորմամբ ներկայացնում ենք հիշյալ կարգի նորակազմ բառերը՝ խմբավորելով ըստ խոսքիմասային պատկանելության, տալով վերլուծական որոշակի մեկնաբանություններ։

⁶ Աղաբաբյան Ս., Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը». տե՛ս Հովհաննես Շիրազ, Հայոց դանթեականը. Հայոց կոտորածների հավերժասուգին, Ե., 1991, էջ 338-341։

⁷ Նշենք դրանցից մի քանիսը. Յովհաննես Շիրազ, Հայոց դանթեականը. Հայ կոտորածների յալերժասուգին, Պէրոյթ, 1965։ Յովհաննես Շիրազ, Հայոց Դանթեականը (Հայ կոտորածներու յալերժասուգին), Թեհրան, 1969։ Յովհաննես Շիրազ, Հայոց Տանդեականը, Պէրոյթ, 1988 և այլն։

1) Առանձնանում են շատ քիչ թվով գոյականներ:

Ազգահավաք ածականը ԺՀԼԲԲ-ում և ԷԱԲ-ում բերված է «ազգը միավորող՝ հավաքող» ընդհանուր իմաստով, առանց բնագրային վկայության, այն կա «Հայոց դանթեականը» պոեմում՝ «համախմբված, ազգովի» իմաստով. Ժայռից էլ հայոց ազգը կհառնի, /Ազգահավաքով նա կգա կրկին, /Նա չի մոռանա եղեռնը երբեք, /Իր հայրենիքը չի թողնի թուրքին (էջ 246):

Դիախոս բառն ունի ԺՀԼԲԲ-ն՝ նշելով «նույնն է դիակահոս», այդպես է նաև ԷԱԲ-ում, երկուսում էլ առանց բնագրային վկայության: Բառը գործածված է հետևյալ օրինակում. Լուռ անցնում էինք այժմ խոլական Եփրատի մոտով՝ /Խեղդվում էինք հայոց եղեռնի հին դիախոսով... (էջ 214):

Զինահառաչ բառը, ըստ ԺՀԼԲԲ-ի, գործածվում է իբրև գոյական, ածական կամ մակբայ, նույն է զինաշաչ բառի հետ՝ «զենքի շայուն՝ շառաչ», «զենքի շայուն՝ շառաչ հանող, շայունով, շառաչով» իմաստներով, իսկ ըստ ԷԱԲ-ի՝ իբրև ածական կամ մակբայ, դարձյալ նույն զինաշաչ-ի հետ՝ «զենքի շայունով՝ շառաչով» իմաստով: Երկուսում էլ չկա բնագրային որևէ վկայություն. բառը գործածված է հետևյալ օրինակում. Եվ դեռ հիտլերված դժոխաշունը /Հիշելով թուրքի խմած արյունը՝ /Հեզ լեհաց վրա խոլ արշավելու վայրկյանից առաջ՝ /Հրաման հաչեց գերման գորքերին իր զինաշառաչ (էջ 179):

Մահածեծ բառը, ըստ ԺՀԼԲԲ-ի և ԷԱԲ-ի, գոյական է, այլև ածական, երկուսում էլ բացատրվում է գրեթե նույն ձևակերպմամբ՝ «ծեծելով մահացած», այլև «մահ առաջացնող՝ պատճառող ծեծ», ոչ մեկում չկա բնագրային վկայություն: Մի գյուղ ամբոխ են նախրի պես քշել, /Բերել խոնել են այս գոցված վայրում/ (Բնչպե՞ս թաքցրնես մեղքը քարայրում), /Ու գանակոծել այնքան մահածեծ / Մինչև որ իրենք իրենց ձեռքերով /Փորեին այստեղ այս դամբանն իրենց (էջ 142):

2) Անհամեմատ մեծ թիվ են ածականական նորակազմությունները: Բնականաբար, բանաստեղծական խոսքում ածականի գործածությունը գեղարվեստական արտահայտչականության ստեղծման լավագույն միջոցներից մեկն է, որով խոսքը դառնում է ոճական առումով պատկերավոր և տպավորիչ:

Դժոխաձայն ածականը ԺՀԼԲԲ-ում բացատրված է «ահռելի՝ ուժեղ՝ դժոխային ձայն արձակող», իսկ ԷԱԲ-ում՝ «դժոխային՝ ահռելի ձայնի նման» և «դժոխային ձայն ունեցող՝ հանող, ահռելի ձայնով», ըստ որում վերջինը ոչ թե ուղիղ, այլ բանաստեղծական իմաստով: Այս վերջին իմաստն է արտահայտում բառը պոեմի հետևյալ օրինակում՝ գործածվելով որպես գոյական. Ազգերից բերված հրազենների, /Հրացանների, հրանոթների/ Դժոխաձայնով ձորը որոտաց, Թնդանոթաթունդ անդունդը թնդաց (էջ 301):

Զղջահար բառը, ըստ ԺՀԼԲԲ-ի և ԷԱԲ-ի, ածական է, մեկի բացատրությամբ՝ «սաստիկ զղջացած» իմաստով, իսկ ըստ մյուսի՝ «զղջման զգացմունքից տանջվող, սաստիկ զղջացած», և երկուսում էլ չկա բնագրային որևէ վկայություն: Որպես մակբայ գործածվել է հետևյալ օրինակում. Երկու գորքի մեջ ուշքը կորցրեց, - /Երբ

ուշքի եկավ, պահ մի փրփրեց, /Դողն ընկավ սրտին, ելավ գղջահար, /Բայց չհայտնվեց էլ մեզ ոչ մի քար... (էջ 181):

Թրամերկ բառը, ըստ ԺՀԼԲԲ-ի և ԷԱԲ-ի, ածական է, մեկի բացատրությամբ՝ «թուրը քաշած, թուրը մերկացրած» իմաստով, իսկ ըստ մյուսի՝ «թուրը մերկացրած՝ պատյանից հանած», երկուսն էլ չունեն բնագրային որևէ վկայություն: Որպես մակբայ գործածվել է հետևյալ օրինակներում. Ու թրամերկ, թրաշառաչ՝ /Հայ վրեժն էր սուրում առաջ (էջ 311): Ու թրամերկ առաջ սուրաց, /Ու թրահար արավ մեկից /Յոթն ասկյարի... (էջ 313) և այլն:

Ինքնախեղդ բառը, ըստ ԺՀԼԲԲ-ի և ԷԱԲ-ի, ածական է, գործածվում է ոչ միայն առանձին, այլև ինքնախեղդ լինել հարադրությամբ, մեկի բացատրությամբ՝ «ինքն իրեն խեղդող (պարանով, ջրով)» իմաստով, իսկ ըստ մյուսի՝ «ինքն իրեն խեղդող՝ խեղդած», երկուսն էլ չունեն բնագրային որևէ օրինակ: Որպես մակբայ գործածվում է հետևյալ օրինակներում. Հորս բռնելով Չանգըրի ձորում... աչքերն են փորում, /Մայրս ինքնախեղդ մեռավ ջրհորում (էջ 104): Ջուրն էին նետում, լպիրշ քրքիջով, մոր ու մանկան հետ... /Եվ անզեն կանայք գետն էին նետվում, սուզվում ինքնախեղդ (էջ 216): Խեղդվում էին՝ մարմինն էլ փրկած, չէին էլ ճշում, /Կարծես ինքնախեղդ քաջությամբ էին սրբությամբ չափվում (էջ 218) և այլն:

Ինքնաստանջ բառը, ըստ ԺՀԼԲԲ-ի և ԷԱԲ-ի, ածական է, ընդ որում ըստ առաջինի բացատրության՝ «ինքն իրեն տանջող՝ չարչարող» և «ինքն իրեն հոգեկան տվայտանք պատճառող», իսկ ըստ մյուսի՝ միայն «ինքն իրեն տանջող՝ չարչարող»: Երկուսն էլ չունեն բնագրային որևէ վկայություն: Գործածված է որպես մակբայ. Մի հույլ լուսնադեմ կույսերի գտանք՝ /Լուսնից էլ լուսնյակ. /Հայելու առաջ /Դրար դեմք էին եղծում ինքնաստանջ (էջ 36):

Խարխափուն բառը, ըստ ԺՀԼԲԲ-ի, ածական կամ մակբայ է, իսկ ըստ ԷԱԲ-ի՝ միայն ածական, առաջինը բացատրում է «խարխափող, խարխափելով», իսկ երկրորդը՝ միայն «խարխափող». երկու դեպքում էլ առանց բնագրային վկայության: Գործածված է որպես մակբայ. Ելավ լուսինը՝ իր դեղին լույսով /Պատանք փռելով դիերի վրա,- /Դուրս ելանք մենք էլ խարխափուն հույսով, /Դատակնիքով նոր ու հնօրյա (էջ 260):

Ծիածանաձև բառը, ըստ ԺՀԼԲԲ-ի և ԷԱԲ-ի, ածական է, առաջինը բացատրում է՝ «ծիածանի ձև ունեցող, կամարաձև», իսկ մյուսը նախորդի բացատրածին հավելում է «աղեղնաձև» իմաստը, երկուսն էլ չունեն բնագրային որևէ վկայություն: Գործածվում է որպես ածական. Եվ Անդրանիկի մոնչան ոգին /Ծիածանաձև իր սուրն էր սրում/Գերի Մասիսի ժայռե շրթունքին, /Ինչպես արծիվն է՝ որսի լեռներում (էջ 328):

Հայակործան բառը, ըստ ԺՀԼԲԲ-ի և ԷԱԲ-ի, ածական է, երկուսն էլ բացատրում են գրեթե նույն կերպ, առաջինը՝ «հայությունը կործանող՝ ոչնչացնող», երկրորդը՝ «հայերին կործանող՝ ոչնչացնող» ձևակերպմամբ, երկուսն էլ չունեն բնագրային որևէ վկայություն: Գործածված է որպես ածական. Դարեր անիծեն եղեռնասաստիս

վրիժաբոցով, /Նզովեն նոցա, որ հայակործան / Շանթ ու կայծակով մեր գլխով անցան (էջ 43):

Մահադալով բառը, ըստ ԺՀԼԲԲ-ի և ԷԱԲ-ի, ածական է, առաջինը բացատրում է՝ «մահվան դալկություն ունեցող, խիստ դալուկ», իսկ երկրորդը նախորդից փոքր-ինչ այլ կերպ, լրացուցիչ ձևակերպմամբ՝ «մահվան դալկություն ունեցող, մահացածի դալկությամբ, դալուկ, դժգույն»։ Երկուսն էլ չունեն բնագրային որևէ վկայություն։ Գործածված է որպես ածական. Եվ անցնում էինք դեռ մտալլուկ, /Դեռ դողում էին բիբերն աչքերիս, /Դեռ ձայներն էին այն մահադալով /Դիերի տակից հանկարծ դուրս գալիս (էջ 146):

Մահատանջ բառը, ըստ ԺՀԼԲԲ-ի և ԷԱԲ-ի, ածական է, առաջինը բացատրում է՝ «մահվան պես տանջող, խիստ վշտալի», իսկ երկրորդը նախորդից փոքր-ինչ այլ կերպ, լրացուցիչ ձևակերպմամբ՝ «մահվան պես տանջալից, մեծամեծ տանջանքներ պատճառող», երկուսն էլ չունեն բնագրային որևէ վկայություն։ Գործածվում է որպես ածական և մակբայ. Մի ողջ գերեվար գյուղով է լցվել,- /Ու դեռ լսվում է հեծքը մահատանջ (էջ 144): Ու չկար թեկուզ շշուկը մահվան, /Աքլորի մի կանչ, կամ շան մի կլանչ, /Գառան մի մայուն, մլավ մի կատվի,- /Անշնչացել էր ողջը մահատանջ (էջ 152):

Մանկասիրտ բառը, ըստ ԺՀԼԲԲ-ի և ԷԱԲ-ի, ածական է, առաջինը բացատրում է՝ «պարզ ու անկեղծ սիրտ ու հոգի ունեցող», չունի բնագրային որևէ կիրառություն, իսկ երկրորդը նշում է բառի ոչ միայն սովորական՝ «մանկական սիրտ ունեցող, պարզ ու անմեղ սիրտ՝ հոգի ունեցող», այլև փոխաբերական՝ «պարզ, վճիտ» իմաստներ, այլև վերջինիս՝ փոխաբերական իմաստի համար, իբրև հեղինակի բառարանագրական ընդհանուր սկզբունքից շեղում, ունի բնագրային վկայություն, այն էլ՝ Հովհ. Շիրազի մեկ ուրիշ ստեղծագործությունից. «Մանուկն անգամ քար չէր ձգում ջրերի մեջ իմ մանկասիրտ»։ Գործածված է որպես ածական. Էլ ի նչ... Ջոհերս մեկ առ մեկ վրձնեմ, /Մեկ առ մեկ բանամ աչքերը մանկանց, /Մանկասիրտ սարսափն ինչպե՞ս վերձանեմ (էջ 226):

Մարդահեղեղ բառը, ըստ ԺՀԼԲԲ-ի, ածական է, իսկ ըստ ԷԱԲ-ի՝ գոյական և ածական, առաջինը բացատրում է՝ «մարդկային հեղեղ, շատ հոծ բազմություն», իսկ երկրորդը նախորդից փոքր-ինչ այլ կերպ, լրացուցիչ ձևակերպմամբ՝ «մարդկային հեղեղ, շարժվող՝ ընթացող մարդկանց խումն բազմություն», այլև «մարդկային հոծ բազմության շարժում՝ հախուռն ընթացք ներկայացնող»։ Երկուսն էլ չունեն բնագրային որևէ վկայություն։ Գործածված է գոյականական արժեքով. Մարդահեղեղով պղտոր ու փրփրուն մարդաալիքվեց, /Հեղեղանման սրտով քրքրված ու անգեն՝ լցվեց /հայ ամբոխների քարվանագրիվ բազմություններով (էջ 300):

Մեջեմեջ բառը, ունեն ԺՀԼԲԲ-ն և ԷԱԲ-ն, երկուսն էլ գտնում են, որ նույն է մեջառմեջ բառի հետ, այլև նշում են առանց բնագրային վկայության. Ուժի աշխարհում վագրի դեմ գառ ես... /Մեջեմեջ երկրիս՝ բավ է թափառես (էջ 198):

Միթևանի բառը բացատրված է ԺՀԼԲԲ-ում և ԷԱԲ-ում, ընդ որում երկուսն էլ առանց բնագրային վկայության են. Բայց չհայտնվեց՝ թեկուզ լեզվակը պոկած գանգս նուրբ, /Ախ, միթևանի մնացած սոխակն իմ ամենասուրբ (էջ 16):

Մշտախոռվ բառը, ըստ ԺՀԼԲԲ-ի և ԷԱԲ-ի, ածական է, երկուսում էլ այն բացատրվում է կրկնակի իմաստով, առաջինը՝ «միշտ խոռվված, ոչ մի բանով չգոհացող», այլն «միշտ ակեղծվող՝ փոթորկվող», ընդ որում նշվում է բառի հազվադեպ կիրառությունն ունենալը, իսկ երկրորդը նախորդից փոքր-ինչ այլ կերպ՝ «միշտ խոռվված՝ վրդովված՝ հուզված», նաև «միշտ ծփացող՝ փոթորկվող». երկուսն էլ չունեն բնագրային որևէ վկայություն. Թե խիղճդ տեղն է, թե մշտախոռվ / Խղճիդ աչքերը չարը չի հանել (էջ 32):

3) Համեմատաբար քիչ են նաև բայական նորակազմությունները:

Գառնանալ չեզոք սեռի բայը ԺՀԼԲԲ-ում բացատրվում է «մեղմանալ, հեզանալ»՝ փոխաբերական իմաստով: Իսկ ԷԱԲ-ում ևս նշվում է, որ բառն ունի փոխաբերական իմաստ, սակայն բացատրվում է «գառ դառնալ, հեզանալ». նկատենք, որ «գառ դառնալ» իմաստը ուղղակի իմաստ է, ոչ թե փոխաբերական: Գործածված է փոխաբերական իմաստով՝ ոճական հակադրության սկզբունքով, այն է՝ «ցուլի՝ խոյի գառ դառնալը՝ խեղճանալը». Վանա մի հովիտն իջանք տխրագին, /Ուր հայտնվելով մայրակուրծք մի գետ՝ /Գիրկն առավ իսկույն մանուկ գետակին: Այդ Մեղրագետն էր հայոց դառնացած / (Երեկվա ցուլը՝ այսօր գառնացած) (էջ 196): Հայոց Մեղրագետ խոյս գառնացած / Միշտ չի մնալու այսպես դառնացած (ն. տ.):

Գիշատվել բայը ներառված է ԺՀԼԲԲ-ում և ԷԱԲ-ում, առաջինում նշվում է որպես կրավորականի ձև գիշատել բայի, իսկ ըստ երկրորդի՝ կրավորական և չեզոք սեռի բայ է, հակադիր գիշատել ներգործական սեռի ձևին. Հազար հազար հայ՝ հազար գիշատված / Հազար քաղաքներ նոսն պես հատված (էջ 275):

Կիսայրել ներգործական սեռի բայը չկա ՄԲԲ-ում, թեև կա կիսայրեաց ածականը՝ «կիսով չափ այրված, մասամբ այրված» իմաստով: Այն ներառված է ԺՀԼԲԲ-ում և ԷԱԲ-ում, երկուսն էլ բացատրում են՝ «կիսով չափ՝ մասամբ այրել», երկուսն էլ չունեն բնագրային որևէ վկայություն. Ու տեսանք դեռ տաք մոխրադժոխքից / Այրված, կիսայրված գրքեր դուրս բերեց (էջ 94):

Միատեղվել բայը կա ԺՀԼԲԲ-ում, հղվում է համատեղվել բային, իսկ ըստ ԷԱԲ-ի՝ այն կրավորական և չեզոք սեռի բայ է՝ հակադիր միատեղել ներգործական սեռի ձևին, ընդ որում երկուսն էլ չունեն բնագրային որևէ վկայություն. Թե մատներիս պես կուռ բռունցքվեին, / Չէր կարող ցրել ազգին ոչ մի հողմ / (Երբ ընկան՝ այնժամ միատեղվեցին) (էջ 91):

Մտահանել ներգործական սեռի բայը գներառված է ԺՀԼԲԲ-ում և ԷԱԲ-ում, ընդ որում առաջինը բացատրում է՝ «մոռացության տալ», իսկ երկրորդը հղում է՝ տես մտահան անել՝ «մոռանալ». երկուսն էլ չունեն բնագրային որևէ վկայություն. «Ով արաբ ժողովուրդ, որ ասպնջական օթևան էս տվել այժմ իմ հայ հատվածներին, չեմ

մտահանել, սակայն դարեր առաջ քո նախահայրերի յաթադանը ևս, որ գալիս էին հորդաններով ահեղատեսիլ և ավերում իմ մանուկ Հայաստանը...» (էջ 170):

Ներմղել ներգործական բայը չկա ՄԲԲ-ում, թեև կա ներմղումն «ներս մղվելը, ներս հոսելը հեղուկի» կա ՄՀԼԲԲ-ում և ԷԱԲ-ում, ընդ որում առաջինը բացատրում է՝ «դեպի ներս մղել, մեջը մղել», իսկ երկրորդը ոչ միայն սովորական՝ «դեպի ներս մղել, մղելով ներս մտցնել», այլև փոխաբերական երկու՝ «միմյանց դեմ մղել՝ դրդել, հրահրել» և «ներս մղել, ներս գցել, ներսում թաքցնել՝ խեղդել» իմաստներով. երկուսն էլ չունեն բնագրային որևէ վկայություն. Եվ ներմղեցի տեսիլներն անշեջ /Մեծն Հովերի ծով ականջի մեջ (էջ 62):

Սմբակահարել ներգործական բայը կա ՄՀԼԲԲ-ում և ԷԱԲ-ում, ընդ որում թե՛ մեկի և թե՛ մյուսի բացատրությամբ՝ «սմբակով՝ սըմբակներով հարվածել»: Երկուսն էլ չունեն բնագրային որևէ վկայություն. Հոշոտեց, կերավ ոչ թե մի Արել, այլ չքնաղ մի ազգ, /Ինչպես նախիրն է սմբակահարում մի փունջ ոսկե հասկ (էջ 120):

Վերատնկել ներգործական բայը կա ՄՀԼԲԲ-ում և ԷԱԲ-ում, ընդ որում իբրև գյուղատնտեսական տերմին՝ «բույսն իր տեղից հանել՝ նոր տեղում (//և ուրիշ տեղ) տնկել» բացատրությամբ, երկուսն էլ չունեն բնագրային որևէ վկայություն: Գործածված է սովորական, ավելի շուտ փոխաբերական, քան տերմինային իմաստով. Այնտեղ, ուր Նոյը, երբ ջրհեղեղի ծով ջրերն իջան, /Իջավ Մասիսից և տնկեց խաղողն առաջին անգամ՝ /Վերատնկելով գոյր մարդկության, /Վերածնելով, Աստծո նման (էջ 83) և այլն:

4) Շատ քիչ դեպքերում է, որ հանդիպում ենք մակբայական նորակազմության: Այսպես, հրազարկ բառն առկա է ՄՀԼԲԲ-ում և ԷԱԲ-ում, սակայն հղում են հրացանազարկ ձևին, որը բոլորովին այլ է, թեև հրացան կազմության առաջին բաղադրիչը հուր բառն, և հրացան սկզբնապես նշանակել է «հուր՝ կրակ ցանող (սպանելու՝ ոչընչացնելու նպատակով)». Ընկան անդնդում, հրազարկ ընկան, /Ընկան մայրերը ճիչերով մանկան... (էջ 302-303):

Հայտնի է, որ հեղինակային նորակազմությունները երբեմն որակվում են իբրև դիպվածային բառեր, այսինքն՝ այնպիսի բառեր, որոնք սովյալ բնագրում երևան են գալիս առավելապես խոսքային դիպվածի բերումով, և շատ քիչ դեպքում է, որ դրանք կարող են դառնալ ընդհանուր գործածության բառեր⁸: Նման բնորոշումը թերևս ճիշտ է միայն այն դեպքում, երբ սովյալ բառն ունի ընդամենը մեկանգամյա, ընդ որում բավական նեղ գործածություն: Բսկ երբ այն սովյալ բնագրում, առավել ևս առհասարակ նույն հեղինակի մյուս երկերում նույնպես ունենում է մի քանի կամ բազմակի գործածություն, այդ դեպքում հազիվ թե հնարավոր լինի նորակազմությունը դիտել դիպվածային:

⁸ Հմմտ. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 122, 242, 485:

Տվյալ դեպքում գործ ունենք այնպիսի բառերի հետ, որոնք Հովհ. Շիրազի միննույն ստեղծագործության մեջ հանդիպում են առնվազն երկու և ավելի անգամ, ուստի հեղինակային խոսքին բնորոշ գործածություններ են, և ըստ այդմ դրանք մեծ մասամբ ոչ դիպվածային բառեր են: Դրանք, ըստ իս, հեղինակային-անհատական ոճի դրսևորման բառային միջոցներ են, ունեն բանաստեղծական լեզվի որոշակի առանձնահատկություններ, առհասարակ ծառայում են գեղարվեստական խոսքի ինքնատիպությանը:

Այսպիսով, Հովհ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմում գործածվել են այնպիսի բառեր, որոնք որպես բառային միավորներ թեև կան ժամանակակից հայերենի ամենաձավալուն բառարաններից երկուսում, սակայն ներկայացված չեն բնագրային որևէ վկայակոչումով, ուստի դրանց անդրադառնալն ունի այն նշանակությունը, որ համալրվում, ավելի ևս ճշգրտվում է նման բառերի գործածության բնագրային հավաստիությունը:

НЕОЛОГИЗМЫ В ПОЭМЕ ОВАНЕСА ШИРАЗА “АРМЯНСКАЯ ДАНТЕИАДА”

АМБАРИЦУМЯН С. В.

Резюме

Лексика поэмы “Армянская дантеида” по сей день не являлась предметом отдельного лексикологического исследования. Неологизмы, использованные О. Ширазом, исследуются на основе сравнительного материала основных толковых словарей армянского языка. Велико значение неологизмов поэта с точки зрения обогащения лексического состава современного армянского языка.